

ՈՒՆՏԱԳՆԱՅԻ ՅՈՒՇԵՐ

ՀԻՄՆԱՅԻՆ ԿՈՂՄՆ ԱՇԽԱՐՀԻ... ՀԱՄԵՆ

Մ. Մարգարանցի

Համշենը կամ Համամաշենը Պատմական Հայաստանի հիւսիս-արեւելքը կը գտնուի: Քարտեզին վրայ հայեացք մը նետելով երկու բան աչքի կը զարնէ՝ Սեւ ծովն ու Պոնտական լեռները: Պատմական կարճ ակնարկ մը նետելէ առաջ պարտք կը զգամ ընթերցողներուս առջեւ բանալու յիշողութիւններու մատեանը և պատմելու առաջին շփումներու մասին Համշենի ու Սեւ ծովի արեւելեան քաղաքներէն վերապրած հայրենակիցներու մասին, որոնցմէ մէկը մեծ հօրս կրտսերագոյն եղբօր Վահան «Էմմիի» կիներ էր, Սիրանոյշ «նանուկը» (Գեորգեան):

Արեւմտահայերս «նանուկ» կ'ըսենք մեր հօրեղբօր կնոջ, հետեւաբար, թէւ ինք հօրս հօրեղբօր կիներ էր, այսինքն իր նանուկը, ուստի և իմ ալ նանուկս էր: Ան թէւ Տրապիզոնէն էր և ցեղասպանութենէն իրօք հրաշքով ազատուած մը, բայց ինքզինք կը նկատէր համշենցի և իր բոլոր բարեկամներն ու ծանօթները, Ռուսիոյ Սոչի քաղաքէն մինչեւ Պաթումի, համշենահայեր էին, որոնք կը խօսէին իրենց բարբառով: Ան հօրեղբօրս հետ կ'ապրէր Սոչի քաղաքին մէջ, կը խօսէր գերազանցապէս արեւմտահայերէն, համշենի բարբառով և կը տիրապետէր ռուսերէնին: Ան քաղաքին փնտռուած կանացի վարսայարդարն էր: Կիրթ էր չափազանց, միշտ կարգի կը հրաւիրէր իր առաջին և վերջին ամուսինը՝ Վահան հօրեղբայրս, որպէսզի ան ուշադրութիւն դարձնէր իր նիստ ու կացին:

Հրաշքով էր փրկուած ան Սեւ Ծովու փրփրադէզ ալիքներուն մէջէն...թուրքի մը կողմէ: Տրապիզոնցի էր, բայց յաճախ ծնողքը զինք կը դրկէին Համշենի մօտ ծովեզերեայ Հոփա քաղաքը, ուրկէ իր ազգականները զինք կ'առնէին ու կը տանէին Համշենի գիւղերը ամռան տօթէն ազատելու համար հէք պարմանուիին:

Կը սկսի Ա. Պատերազմը: Հայրը կը կանչուի բանակ, որպէս թուրքերէնի, ռուսերէնի և ֆրանսերէնի լաւ գիտակ անձնաւորութիւն: Այդ երթալը կ'ըլլայ: Տունը կը մնան մայրը, փոք-



րիկն Սիրանոյշը և միակ եղբայրը, որ իր մեծն էր: Եղբայրը կը յաջողի ռուսական զօրքին հետ փախչիլ: Մայրը կը մեռնի վիշտէն: Օր մըն ալ «Բարի» թուրքեր կը յայտնուին և յոյն դրացիներուն տունէն ուրիշ երախսաներու հետ կը տանին նաեւ Սիրանոյշը՝ խոստանալով դրացիներուն քանի մը ոսկիով ծովու ճամբով հասցնել ռուսական նաւերը:

«Բարի» թուրքերը ցամաքէն հազիւ քանի մը հարիւր մէթր հեռացած՝ հայ տղաքն ու աղջիկները իրարու ետեւէ ծովը կը թափեն:

Սիրանոյշ նանուկս կը պատմէր թէ տասնամեակներ ետք տակաւին իր ականջներուն մէջ չեն լրած իր խեղդուող տարեկիցներուն աղաչանքները: Թէ ո՞վ ազատեցաւ այդ Սեւ Ծովէն՝ միայն Աստուած գիտէ, բայց ինք ազատեցաւ շնորհիւ իր հօրը, որ իրեն լողալ սորվեցուցած էր, և շնորհիւ հօրը հաւատարիմ բարեկամ թուրքի մը, որ հետեւած էր իրենց նաւակին և կրցած էր մահուան ալիքներուն դէմ կռուող պարմանուիի Սիրանոյշը ազատել ու ետքն ալ յանձնել կաթոլիկ քոյրերուն:

Այս դէպքերէն 99 տարի ետք ես կը գտնուիմ Տրապիզոն, մեծ նանուկիս ծննդավայրը, ուր կրկին ... ախորժակ չունիմ ուտելու: Քիչ ետք կ'ուղղուինք դէպի ծովեզերեայ Ռիզէ և ապա Հոփա քաղաքները:

«Սեւ ծովը նոյնն է միշտ» պիտի գրէր հետագային պոլսահայ գրող Գեղամ Սեւան: Վաթսուն-եօթանասունական թուականներուն, երբ Երեսնէն Սոչի կ'երթայինք մեծ «Էմմիին» տունը, ուրախ բացազանչութիւններով կը դիմաւորէինք այն պահը, երբ կը յայտնուէր Սեւ Ծովը, որ որքան ալ «սեւ» ըլլար, մեզի համար հաճելի յայտնութիւն մըն էր անիկա՝ մանաւանդ ինծի համար: Չէ՞ որ սա այն ծովն էր, որուն ափերով եթէ նաւարկէիր դէպի արեւմուտք, ապա հարաւ, մտնէիր Վոսփորի նեղուցը, ետքը Մարմարա, Եգէեան ծով ու Միջեր-

կրական և շարունակելի մատարկությունը դեպի արեւելք, կը հասնէիր իմ հօրենական Չորք-մարգպան աւանի ամփերը՝ Աղեքսանտրէի ծոցը, ետքը՝ մօրս ծննդավայր Իսկենտերուն քաղաքը, այնուհետեւ մինչեւ հոն հասնելէն ետք ինչո՞ւ առագաստներդ լայն չբանայիր՝ իջնելու համար հարաւ, մինչեւ իմ ծննդավայր Պէյրութ քաղաքը...

Այս որքա՞ն փոքր է եղեր աշխարհը, բայց որքա՞ն ցաւ ու վիշտով լեցուն միաժամանակ:

Կը հասնիմք Հոփա, որ ընդամէնը 25-30 քլմ. արեւմուտք կը գտնուի վրացական սահմանէն: Խանդավառութեամբ կը դիմաւորուինք պանդոկին անձնակազմին կողմէ: Յայտնի է որ կը սպասէին մեզ: Կ'իջեցնեն ճամպրուկները կը տեղափոխեն ներս, որովհետեւ անձրեւ կը սպասուի - սովորական ամառային եղանակ Սեւ Ծովու ամփերուն:

Ուրեմն ես հիմա կը գտնուիմ ամենէն «համշէնական» ծովեզերեայ քաղաքը՝ մէկ կողմէ Սեւ ծովն է, որ նոյնն է միշտ՝ ալեկոծ, կապարագոյն և աղմկոտ, ինչպէս չորս-հինգ հարիւր քիլոմէթր դիմաց գտնուող Մոչիի ծովափը, միւս կողմը Պոնտոսի վիթխարի լեռնաշղթան է՝ կանաչ, անտառապատ, յար եւ մման իմ մանկութեան շրջանի Լիբանանի Ճիւնի քաղաքին ու Մաամըթէյն կոչուած ծովափին, ուրկէ դէպի երկինք կը սլանայ Լեռնալիբանանի ամփամբձ լեռնաշղթան՝ որուն թագն ու պսակը կը կազմէ Աստուածամօր հսկայական արձանը:

Իրարանցում մը կը գրաւէ ուշադրութիւնս պանդոկին ընդունարանին մէջ: Մինչ քանի մը համազգեստաւոր պաշտօնեաներ կը փափաքին մեր ճամպրուկները փոխադրել մեր սենեակ- ները, միջին տարիքի պաշտօնեայ մը թրքէ- թէնով կը սաստէ զանոնք ըսելով.

- Ձգեցէ՛ք, ասոնք իմիններս են,- ակնարկելով զբօսաշրջիկներուս:

- Այս մարդը համշէնցի հայ ըլլալու է,- կը յուշէ Աւօ:

Այդ պահուն անբացատրելի կարօտ մը և անզուսպ ցանկութիւն մը կը զգամ խօսելու հետը: Չէ՞ որ ան նմոյշ մըն է համշէնահայու, իսկական վերապրող մը՝ մահմետականացած կամ ոչ:

Կ'ողջունեն զինքը ու կը հարցնեն.

- Հէմշէնցի՞ ես:

- Հա՛, - կ'ըլլայ պատասխանը:

Ճիշդ էր նախագագումս: Արեան կանչը

չէր դաւանամ զիս:

- Հէմշինճէ կը խօսի՞ս,- կը հարցնեն:

- Հէմշէնցի իմ, կը խօսամ,- կը պատասխանէ:

Այս կարճ ծանօթացումը բաւարար էր ինծի համար, որպէսզի յաջորդ երեսուն վեց ժամերուն փորձէի իր բարբառով և իմ գիտցած քանի մը նախադասութիւններով «հէմշիններէն» խօսիլ հետը:

Անբացատրելի ու առեղծուածային զգացումներ զիս կը կապեն այս մարդուն հետ: Հոգեհարազատութիւն - գուցէ, Սիրանոյշ նանուկի յիշատա՞կը - հաւանաբար, կորսուած ու գտնուած հարազատի մը յայտնութիւնը, պատմական ճակատագիրը այս մարդոց, կամ այս բոլորը միասի՞ն...

Ընդունարանին մէջ նոր աշխուժութիւն մը սկսի. կը թուի թէ տեսիլք մըն է եղածը: Հարսնիքի ներկայացող սպիտակագետ գեղեցիկ ու հասակաւոր օրիորդներ իրենց ընկերակից ունենալով «թաքսիտօ» համազգեստներու մէջ կոճկուած երիտասարդներ կը մտնեն պանդոկ: Երջանկութիւնն ու ժպիտը կը ճառագայթեն իրենց դէմքերէն: Այո՛, կարծես թէ մեր հայրենիքին մէջ ենք և կամ Լոս Անճելըսի հայկական հարսանեկան արարողութեան մը, ուր երիտասարդները կը փայլին իրենց տարիքին յատուկ լուսաշող դէմքերով:

Մեր խումբի կանայք, որ այսպիսի տեսարաններու ներկայ եղած են շատ յաճախ, չեն թաքցներ իրենց հիացմունքը և ամի ի բերան մնացած ու մոռցած իրենց ճամպրուկները, կը փոխանակեն սա խօսքերը.

- Քա՛, Յասմիկ, գեղեցիկ են, չէ՞...

- Աղջիկ, ճիշդ հարսիս կը նմանի... այսքան նմանութիւն ալ կ'ըլլա՞յ եղեր:

- Ասոնք հայ ըլլալու են...

«Ասոնք հայ ըլլալու են»ը զիս կը նետէ անցեալի գիրկը՝ երեք, չորս, հինգ կամ տասը տասներկու դարեր ետ:

Հէմշին, Համշէն, Համամաշէն, Պոնտոսեան լեռներ ու Պոնտական Ծով (Սեւ Ծով) ու Տորք Անգեղ:

Պատմական աղբիւրները զանազան տեղեկութիւններ կու տան տարածաշրջանին մասին. յունական, պարսկական, հայկական, օսմանեան և ռուսական աղբիւրները շատ բաներ կը պատմեն այս մասին: Օրինակ մեր առասպելական Տորք Անգեղը, որ վիթխարի հսկայ մըն էր ու անճոռնի արտաքին մը ունէր, բայց տէր էր իր ազգին, պահապանն էր անոր

եւ... արուեստագէտ մը: Պատմահայր Խորենացին, հիմնուելով հայկական անգիր աղբիւրներու վրայ (առասպելներ), կը մէջբերէ հետեւեալ դրուագը Անգեղեայ Տորքի քաջագործութեան մասին:

Ուրեմն այսպէս, հիւսիսային Կովկասէն վայրաբարոյ ու աւարարող ասպատակներ կը ներխուժեն Մեծ Հայքի (Հայաստան) սահմաններէն ներս ու կը սկսին թալանել, աւարարել, ահաբեկել ու գերեվարել հայ ժողովուրդը: Այս ատեն Տորքը զբաղած էր, բայց երբ կ'իմանայ այս մասին, իր հսկայական քայլերով կը հասնի ծովահէն աւազակներուն, որոնք յաջողած էին իրենց առագաստանաւերը բարձրանալով խորանալ Պոնտական Ծովու բացերը: Կատողած Տորքը ազատելէ ետք գերիները հսկայական ժայռեր պոկելով Պոնտական լեռներէն՝ կը նետէ աւազակներու առագաստանաւերուն վրայ ու ծովամոյն կ'ընէ զանոնք:

Համշէնցիներ: Ըստ մելան հոսած է այս շրջանի բնակիչներուն ծագման ու անցած պատմական ճանապարհին մասին: Որո՞նք են անոնք: Մէկդի դնելով թրքական շինծու «պատմագիտութիւնը», որովհետեւ ոչ մէկ կապ ունի գիտութեան ու պատմագրութեան հետ, պատմական աղբիւրները կը նշեն թէ շրջանին մէջ ապրած են կոլխիտները, յոյները, լազերը, մեծ թիւով հայեր, վրացիներ, իսկ Օսմանեան կայսրութեան շրջանին փոքրաթիւ թիւքմէններ, որպէս զաւթիչներ: Բնակչութիւնը մինչեւ ԺԷ-ԺԸ. դարերը եղած է քրիստոնէայ (յոյն ուղղափառ, հայ առաքելական): Ճարտարապետական կառոյցները, ինչպէս վանքեր, եկեղեցիներ, կամուրջներ, աղբիւրներ, տեղական բարբառներ կը վկայեն այս մասին:

Չանտեսելով Մեւ ծովու հարաւ-արեւելեան ծովային ու լեռնային տարածութեան վրայ ապրող այլ ազգային խումբերու գոյութիւնը, Համշէն անունը յառաջացած է 8-րդ դարու վերջերը: Ըստ հայկական պատմական աղբիւրներու, Համամ եւ Շապուի Ամատունի իշխանները այլեւս չդիմանալով արաբական խալիֆայութեան հալածանքներուն, կ'որոշեն իրենց գօրքով ու ժողովուրդով գաղթել աւելի ապահով ու լեռնային շրջաններ: Այսպիսով Վասպուրականէն ու Այրարատէն շուրջ 12.000 գաղթականներով կը հեռանան ու կը հաստատուին Բիւզանդական կայսրութեան մէջ մտնող Խալքիա (հայկական՝ Խաղտիք) զինուորական շրջաններուն մէջ: Համամ իշխանը կը հիմնէ Համամաշէնը, որ հետագային բառի

կծկումով կը դառնայ Համշէն: Գաւառակը իր մէջ կ'ընդգրկէր Համշէնը եւ Քաչքար լեռները (մինչեւ հիմա կը կոչուի այս անունով):

Շրջանին մէջ ժողովրդագրական այլանդակ փոփոխութիւնները կը վերագրուին Օսմանեան Թուրքիոյ քաղաքականութեան: Եթէ մինչեւ ԺԵ. դարը Համշէնի իշխանութիւնը պահպանէր իր կիսանկախ հայկական դիմագիծը, ապա ԺԶ-ԺԷ. դարերէն Օսմանեան կայսրութիւնը ահաւոր տնտեսական և քաղաքական ճնշումներու ենթարկելով շրջանի քրիստոնէայ բնակչութիւնը, որուն շարքին հայ և յոյն ազգերը յատկապէս, բռնի դաւանափոխութեան կ'ենթարկէ զանոնք: Այսուամենայնիւ ժողովուրդը կը շարունակէ պահել իր ազգային-կրօնական սովորութիւններուն մեծ մասը և բարբառը, որ մինչեւ հիմա կը խօսուի թէ՛ Քաչքար լեռան գիւղերուն, աւաններուն (Արդուին և այլն) և թէ՛ Մեւ ծովու արեւելքն ու Սոխում-Սոչի ծովափնէայ գիւղերու ու քաղաքներու մէջ:

Կը յիշեն, երբ Սոչիի Սիրանոյշ նանուկը իր հայրենակիցներուն կը հանդիպէր, ինչպէս բանասէր ու բանահաւաք Բարունակ Թորլաքեանին, անոնք չէին խուսափէր իրարու հետ այդ բարբառով հաղորդակցիլ: Ծիծաղս չէր գար, բայց ժպիտով ու հաճոյքով կը հետեւէի անոնց խօսակցութեան, որուն մէջ կը սպրդէին Համշէնի բարբառէն բառեր ու նախադասութիւններ: Ինծի այնպէս կը թուէր թէ հինաւորաց ու դարերու խորքէն մեզի հասած մեղեդիի հատուածներ ըլլային անոնք:

- Բարնակ,- կը հարցնէր Սիրանոյշ, *խունծուրը ի՞նչ արճուշ* (կամ նման բան մը - Բարունակ, խնծորը ի՞նչ կ'արժէր):

Հնագոյններէն մէկն է Համշէնի բարբառը, եթէ վերջին դարերուն մտած թրքերէն բառերը չհաշուենք կամ զանոնք փոխարինենք բարբառին յատուկ բնիկ բառերով, ապա պիտի տեսնենք թէ որքա՞ն հարազատ, գեղջկական ու մաքուր բարբառի մը հետ գործ ունինք: Համշէնցիները «չեն ամչնար», այլ «օմչընուշ» կ'ըլլան, «ժամ չեն երթար, այլ՝ «ժօմ», «կ'ուզիմ ունի» երբ ըսեն, հասկցիր որ «կ'ուզեմ» ըսել կ'ուզեն, անոնք «չուր» չեն խմեր, այլ «ջուր» (ճուր) եւ այլն:

Յաջորդ օրը ճամբայ կ'ելլենք կտրելու համար Պոնտական Լեռնաշղթային Քաչքար լեռները: Փրփրադէզ ու պղտոր ցեխագոյն գետին ափով մեր ինքնաշարժը կը բարձրանայ: Չախին գետն է, որ կը հոսի խիտ անտառոտ լեռնանցքի մը մէջէն, որուն երկու

լանջերուն թէյի թուփերն են քիլոմէթրերով: Երկու ժամ ետք շունչ առնելու համար կը կենանք ամառանոց գիւղակի մը մօտ: Ես, համշէնցի գտնելու մոլուցքով տարուած, կը քալեմ ամառանոցին միակ փողոցէն: Մարդոց դէմքերը տարբեր են հոս: Ընդհանրապէս բաց գոյնի մորթ ունին, աչքի կը զարնեն կապուտ-աչեաները: Բաւական կոկիկ սրճարանի մը մէջ մեզ կը դիմաւորէ Լազի գլխաշորով, դարձեալ կապուտաչեայ ու հպարտ նայուածքով միջին տարիքի կին մը: Սպիտակամորթ ու գեղեցիկ դէմքերնին գոցելու ճիգ չեն թափեր այստեղ (բարեբախտաբար) մատուցողուիները և ազատօրէն կը հաղորդակցին տղամարդոց հետ:

Քաջալերուած ցոյց տրուած ազատամիտ վերաբերմունքէն, կը հարցնեմ եթէ թուրք են կամ համշէնահայ: «Ես լազ եմ», կը պատասխանէ մատուցողուիին ու կը շարունակէ. «խորհուրդ կու տամ այս թէյը ապսպրել, տեղական է»:

Կը հասնինք ճորոխ գետի ամենի կիրճին բարձունքները: Վարը ճորոխն է, վերը կապոյտ երկինքը, տիրապետող գոյնը՝ կանաչը: Պոնտոսի լեռնագագաթները ձիւնէ գլխարկներ հագած են եւ աղամանդի պէս կը փայլին երկնի անհաս բարձունքներու ներքեւ: Չէ, իրօք ուրիշ աշխարհի մըն է սա, ալպիական չքնաղ բնութիւն մը տակաւին չեղծուած ու չապականուած քաղաքակրթութեան կողմէ:

Տակաւին չեղծուած: Նորէն յուշ մը կու գայ. այս անգամ Պոլսոյ Պէյօղլուէն, այո՛, այն Պէյօղլուէն որուն կը հանդիպի հայ գրականութեան ընթերցողը Յակոբ Պարոնեանի, Գրիգոր Զօհրապի, Զապէլ Եսայեանի, Երուխանի և առհասարակ արեւմտահայ գրականութեան մէջ:

2011-ին էր երբ հայ ուխտագնաց զբօսաշրջիկներու հետ կը զբօսնէինք ինքնաշարժներու երթելելութենէ ազատագրուած Պէյօղլոյի մէջ: Գրեթէ հասեր էինք Պոլսոյ Օսմանեան շրջանի այն իրաւաբանական հաստատութեան առջեւ, ուր իրաւաբան, երեսփոխան ու գրագէտ Զօհրապ կը դասաւանդէր իրաւագիտութիւն: Մինչ ես իմ յուշերուս մէջ մխրճուած կ'ապրէի Զօհրապի յաճախանքը, մանաւանդ մետաղեայ հսկայ դարպասին վրայ կարդալէ ետք արաբատառ օսմաներէնով գրուած հաստատութեան անունը, յանկարծ խումբ մը ուսանողներ սկսան երգեր կատարել կիթառով ու թմբուկով: Աշխոյժ էին ու անկեղծ: Բողոք մը ունէին կարծես: Մօտեցայ

իրենց իմ երիտասարդութեան օրերուս «յեղափոխական» կարօտէն մղուած ու փորձեցի իմ գիտցած թրքերէնով հասկցուիլ: Բաներ մը ըսին ինծի, որմէ այն հասկցայ որ բողոքի եկած էին և այս հաստատութեան մուտքը ընտրած էին իրենց խօսքը հասցնելու առ որ անկ է:

Կապուտաչեայ օրիորդներէն մէկը գնահատելով հետաքրքրութիւնս փորձեց անգլերէն, թրքերէն և ֆրանսերէն լեզուներով արդարացնել իրենց խաղաղ ցոյցին պատճառները: Շուտով պարզ դարձաւ որ բողոք մըն է որ կ'ուզեն հասցնել համեմատաբար աւելի ազատամիտ Իսթանպուլին: Պարզուեցաւ որ անոնք շրջանի բնակչութեան սրտի թարգմանը ըլլալով պատգամ մը կ'ուզեն փոխանցել ամենայն քաղաքավարութեամբ և քաղաքացիական պարտքի գիտակցութեամբ:

Շրջանի ժողովուրդը դժգոհ է եղեր ջրամբարտակներու շղթայի մը կառուցմամբ, որուն պատճառով բնութիւնը պիտի այլանդակուէր, թէյի ցանքատարածութիւններ ճորոխ գետի տակ պիտի անցնէին, օդը պիտի ապականէր և այլն և այլն: Ապա երիտասարդները սկսան անցնող գացող հետաքրքիրներուն ցոյց տալ նկարներ, նախատեսուած շինարարական ծրագիրներու գծանկարներ ու գրեթէ անճանաչելի դարձած «նոր» պեթոնապատ բնութեան մը մոայլ տեսարաններ:

Այդ օրը ես իրենց յիշատակարանին մէջ գրեցի. «Միրտա ձեզի հետ է, Աստուած փորձանքէ հեռու պահէ ձեզ»՝ ստորագրութեանս դիմաց գրելով Էլիասցէս և մեծատառ գրելով՝ ՀԱՅ մը ովկիանոսէն անդին:

Մինչ մեր ինքնաշարժը զգուշութեամբ կը բարձրանայ Քաջքար լեռնային բարեկարգ ճանապարհով, ճորոխի ամենի ձորին հանդիպակաց կողմը կը բացուի հայկական պատմական Արդուին քաղաքը, բացառիկ գիւղաքաղաք մը այսօրուան Թուրքիոյ հիւսիսարեւելեան տարածքին մէջ, ուր ... աչքի չեն զարներ մզկիթներու երկնասլաց միմարէթները: Թուրքերը, կամ թրքացուածներ 18-19-րդ դարու ռազմաքաղաքական արիւնոտ դէպքերու պատճառով շրջանին մէջ դարձած են մեծամասնութիւն մը, իսկ Արդուինի պարագային՝ վերջին տասնամեակին, ինչպէս շատ այլ տեղեր:

(Շարունակելի)